

# ԴՊՐՈՑԻ ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՄՏՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԷԴՈՒԱՐԴ ԶՈՀՐԱԲՅԱՆ

## Ն.Ս.Օ.Տ.Տ. ՎԱԶԳԵՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՄՇՈՒԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Հայոց ազգային մեծերի աստղաբույլի մեջ կան նվիրյալ գործիչներ, ովքեր տակավին կենդանության օրոք անվերապահորեն ոչ միայն արժանացել են մեր ժողովրդի խորագույն հարգանքին ու անկեղծ սիրուն, այլև սրբացվել նրա կողմից:

Այդ ոչ բազմաքանակ փաղանգի մեջ իր բացառիկ, ուրույն տեղն է զբաղեցնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսը, որի կյանքն ու գործը մարմնավորում է մի ողջ դարաշրջան՝ իր անվիճելի նվաճումներով և տարամերժ հակասությամբ: Նրա կերպարը դարձել է մեր պետության նորագույն ժամանակներում հայոց հոգևոր հովվապետի անզուգական կատարելության խորհրդանիշ: Այսօր էլ ցանկացած հայ մարդու մտապատկերում Վազգեն Ա կաթողիկոսը պատկերվում և հիշվում է իբրև աստվածային մարդ և սուրբ կերպար:

Տարիները որքան հեռացնում են Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի ապրած ժամանակաշրջանից, այնքան ավելի իրական գույներով ու լիարժեքորեն է հառնում նրա՝ Մեծ մարդու, բազմագիտակ մանկավարժի ու հոգեբանի, վեհապարկեշտ ու վսեմաշուք հոգևոր գործչի ու հովվապետի պատկերը: Վազգեն Ա-ն իր անցած կյանքի ճանապարհով ստեղծեց հովվապետի և ազգի ու հայրենիքի անմնացորդ նվիրյալի մի կերպար՝ հիմքում ունենալով եռամեծար մշտնջենական հայրենիք, եկեղեցի և ժողովուրդ արժեքները:

Արարչային կամքով ծնված, հայոց կենարար զորությամբ տոգորված Լևոն-Կա-

րապետ Պալճյանի համար նախախնամությունը ուղենշել էր ճանապարհի դեպի հայոց հովվապետի նվիրական գահը: Իրոք, շնորհատու ամենաբարձրալը շոյալ էր գտնվել նրա նկատմամբ՝ երկնային սիրո անստվեր լույսով ամբարելով նրա մեջ բազմաձիրք շնորհաշատություն, արդարակշիռ, առաքինի ու վեհապարկեշտ հատկություններ, որոնք բովանդակում են Վազգեն Ա-ի բազմաբեղուն գործունեությունը բոլոր ոլորտներում:

Հայոց հայրապետն իր գործունեության բոլոր շրջափուլերում համագոյակից էր ողջ բազմասփյուռ հայությանը՝ անխտիր աշխարհի բոլոր ծագերում: Մեծ բարենորոգիչ հայոց 130-րդ հովվապետը երկայնամիտ և ըմբերական ողջախոհությամբ ուժ առնելով ամենաբարձրալից՝ բարեշինական բազում գործեր թողեց՝ վերականգնելով և նորանոր կոթողներ կառուցելով ինչպես ս. Էջմիածին մայր տաճարում և նրա շրջակայքում, այնպես էլ մեր երկրի տարբեր վայրերում և աշխարհասփյուռ գաղթավայրերում:

Վազգեն Ա կաթողիկոսի կյանքին ու գործունեությանը նվիրվել են բազմաթիվ աշխատություններ, հոդվածներ, հիշողություններ. նրա մասին գրվելիք նյութն անսպառ է, իսկ ասելիքի ազդակներն՝ աննվազելի:

Աստվածային կատարյալ իսկության և մշտնջենական էության խորախորհուրդ գանձեր էին ամբարված Ամենայն Հայոց 130-րդ հայրապետի հոգու շտեմարանում: Հենց դրանց վրա էր խարսխված նրա՝ իբրև Մեծ մարդու, մանկավարժի, մտավորական

գիտնականի, հոգևոր և հասարակական գործչի բազմարդյուն գործունեությունը:

Վազգեն Ա–ի կյանքի և բազմաբեղուն գործունեության լուսաբանումը մեր ժամանակներում խիստ արդիական է: Նրա բովանդակ կերպարը բոլոր առումներով ամբողջական ներկայացնելը նման է մեկ մարդու կողմից հաստաբուն կաղնին գրկելուն, որն անհնարին է: Ուստի մենք խնդիր ենք դրել դիտարկելու Հայոց հայրապետի հասարակական և գիտամշակութային գործունեության ասպարեզները, որոնք, մեր կարծիքով, դեռևս կարոտ են լուրջ գիտական ուսումնասիրության: Փորձել ենք հոգևոր հարթության հենքի վրա մատուցել նաև նրա գիտամտավոր և մշակութային անգնահատելի կարողությունները՝ լծորդելով դրանք ժամանակի հասարակական–քաղաքական կյանքի իրողություններին:

Այս տեսանկյունից նրա կյանքի ու գործունեության մեջ կարելի է առանձնացնել երկու պատմափուլեր՝ աշխարհիկ – թեմական առաջնորդական և կաթողիկոսական շրջաններ, որոնք, սակայն, անջրպետված չեն միմյանցից: Ավելին, դրանք սերտորեն փոխկապակցված են և լրացնում են իրար, կազմում են ամբողջական բազմերանգության ներդաշնակություն:

Առաջին պատմափուլում՝ աշխարհիկ գործունեության շրջանում, տակավին երիտասարդ տարիքում ի հայտ եկան Լևոն Կարապետ Պալճյանի մտավոր, մանկավարժական, կազմակերպչական ունակությունները, երբ 19–ամյա երիտասարդը մուտք գործեց «Միսաքյան–Քեսիմյան» ազգային վարժարան՝ նախ որպես կազմակերպիչ, իսկ այնուհետև ուսուցիչ: Հետագայում նա դասավանդում էր Բուխարեստի հայկական դպրոցներում, ուր իր մանկավարժական գործունեությունը շարունակեց մինչև 1943 թվականը:

1932 թ. նա Բուխարեստի պետական համալսարանի գրականության և փիլիսոփայության ֆակուլտետի ուսանող էր, որն ավարտեց 1936 թ., իսկ 1937 թ. ուսումնատենչ երիտասարդն ավարտեց նաև գործնական մանկավարժության ֆակուլտետը: Ապագա

Ամենայն Հայոց հայրապետի արագաթռչք միտքն ու մտավոր և գիտական անառարկելի կարողությունները, գրական ծիրքը ի հայտ եկան հատկապես նրա հրապարակագրական, խմբագրական գործունեության մեջ: 1937 թ. հունիսին ռումինահայ համալսարանական հայրենասեր երիտասարդները հրատարակեցին «Հերկ» ամսագիրը, որի խմբագիրն էր Լևոն Կարապետ Պալճյանը: Ամսագիրն ուներ մշտական մի շարք էջեր՝ «Տնտեսական», «Էջ մը պատմութենէ», «Գիտական», «Այսօրուան երիտասարդութիւնը» և այլն: Ավելի ուշ բացվեց մի նոր մշտական էջ «Մեր հարցումին կապտապսանեն», որտեղ գետեղված հողվածներում արծարծվում էին ուշագրավ կարծիքներ, տեսակետներ, քննարկվում էին ոչ միայն ռումինահայ համայնքի ներքին կյանքի տարաբնույթ խնդիրներ, այլև համազգային նշանակության հիմնահարցեր: «Ինչ կը նշանակէ» մշտական էջում ներկայացվում էին Կարապետ Պալճյանի փիլիսոփայական տարբեր կատեգորիաների լուսաբանմանը նվիրված մի շարք հողվածներ, իսկ «Գիտական» կոչվող բաժնում՝ նրա «Մենտելի օրենքները», «Բնագո և գիտակցություն» ուսումնասիրությունները:

1938 թ. հունվարի 8–րդ համարում բացվում է նոր էջ, որտեղ ներկայացվում էին աշխարհի տարբեր երկրներում ապրող հայ մտավորականների կարծիքները հայ երիտասարդների, նրանց անելիքների և այդ դիտանկյունից ամսագրի կոչման ու կատարած դերի մասին: Ամսագրում սկսում են արծարծվել նաև սփյուռքում ապրող հայ մտավորականների և նշանավոր գործիչների կարծիք–հողվածները՝ Ալեքսանդրիայից (Օ. Ռ. Պէրպէրեան), Բարիզից (Լ. Կ. Կերտան), Սոֆիայից (Գ. Նժդեհ), Փարիզից (Ս. Վրացյան), Բուխարեստից (Ս. Արարատեան), Վենետիկից (Հայր Սահակ Կոզեան, Մխիթարյան միաբանություն): Լևոն Կարապետ Պալճյանը, ի մի բերելով ու խմբագրելով թղթակցություններն ու առատ նյութը, ինքը ևս տպագրում էր խմբագրականներ ու հողվածներ հայ մշակույթի, հայոց պատմության, հայ ոգու, մտքի, Ս. Էջմիածնի, հայ երիտասարդության, սփյուռքի մասին՝ ուսա-

նեղի խորհրդածություններով և իմաստալից եզրահանգումներով: Ամսագիրն ու նրա երիտասարդ խմբագիրը նոր շունչ էին հաղորդում համայնքի կյանքին, նպաստում հայ մտքի անշեղ առաջընթացին՝ ուղղորդելով այն դեպի անափ հայրենասիրության ճշմարիտ ու վեհ գաղափարը: Իր «Հայու պայքարը» հոդվածում Կարապետ Պալճյանը ռումինահայ երիտասարդությանը հորդորում էր. «Պայքար, մշտապես պայքար՝ մեր ազգային արժեքները, ձգտումները, ապրումները փրկելու: Եվ զանոնք վերստին կյանքի կոչելու տենչը պետք է ստեղծե այդ պայքարը»<sup>1</sup>:

Համալսարանական կրթությունն ու մանկավարժական աշխատանքի հարուստ փորձը, հրապարակագրի տաղանդը, գրական ձիրքն ու զարգացած ճաշակը, հանրային կյանքին ակտիվ մասնակցությունը բավականաչափ ճանաչում էին բերել նրան ռումինահայ երիտասարդության շրջանում:

Նրբանկատորեն արձագանքելով իր գործունեության միջավայրում ծավալվող խմորումներին՝ Լևոն-Կարապետ Պալճյանը իր իսկ կողմից հիմնադրած «Հերկ» ամսագրում զարգացնում էր սերունդների հաջորդականության և շարունակականության ու միասնականության գաղափարը ռումինահայ գաղթօջախում: Այս գաղափարը հետագայում նրա հոգևոր գործունեության հիմնարար սյուններից մեկն ու հավատամքն էր դառնալով՝ վերածվելով ոչ միայն միմյանց հաջորդող սերունդների, այլև հայոց բազմադարյան պատմության բավիղներում անթեղված հոգևոր, նյութական, մշակութային արժեքների անաղարտ պահպանման, սերունդներին փոխանցման աներևույթ կամրջի, բովանդակ ազգին համախմբելու և ազգային իղձերը կենսակոչելու առհավատյալի: Երիտասարդ խմբագիրը հայոց ազգային-եկեղեցական և մշակութային կյանքի մասին խոսելիս ինքնատիպ ոճով ու ուրույն փոխափայլությամբ արծարծում էր հայրենիքի սիրո գաղափարը, հայ մշակութային պաշտամունքը, մշտաբորբոք պահում Հայաստանյաց եկեղեցին, հորդորում բոլոր

հայրենակիցներին լինել խոհուն, առաջնորդվել գիտության լույսով, կարգապահության ճանապարհով: Հայրենապաշտ մտավորականի գիտական-գրական տաղանդն իր ամբողջ ուժով փայլեց նրա մի շարք հայրենասիրական ստեղծագործություններում, որոնք ոչ միայն բացահայտում էին Կարապետ Պալճյան գրողի խորագիտակ կարողություններն ու բազմաշնորհ տաղանդի նոր որակները, այլև հայրենամուտն ու բարեպաշտ Մեծ հայի անզուգական կերպարը<sup>2</sup>:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին ռումինահայոց թեմի առաջնորդ դարձյալ իր հայրենիքի ու հայրենակիցների կողքին էր: Նա դժվարին այդ շրջանում հոգ էր տանում ոչ միայն ռումինահայ գաղթօջախի հայերի, այլև Ռումինիայի ֆաշիստական համակենտրոնացման ճամբարում պահվող ավելի քան հազար հայ ռազմագերիների մասին: Այդ մասին է վկայում երիտասարդ վարդապետի խիզախ այցը գերմանական համակենտրոնացման ճամբար՝ հայ ռազմագերիներին սատարելու, մոտալուտ հաղթանակի լուրով քաջալերելու և հուսադրելու նպատակով կարդացած քարոզը<sup>3</sup>:

Մինչ Լուսավորչի գահը ժառանգելը Վազգեն եպիսկոպոսը շարունակում էր իր հասարակական, մտավոր-գիտական գործունեությունը: Ոչ միայն Ռումինիայի և Բուլղարիայի հայության շրջանում իր հայրենասիրական, եկեղեցասիրական քարոզներով, հոդվածներով, գրքերով, այլև Ս. Էջմիածնի Մայր Աթոռին և Գևորգյան ճեմարանին սատարում և օգնում էր նվիրատվություններով և այլ միջոցներով<sup>4</sup>:

1955 թ. սեպտեմբերի 29-ին ս. Էջմիածնի Ազգային եկեղեցական ժողովը արտասահմանի և ներքին սփյուռքի 19 թեմերի պատվիրակների, բազմաթիվ հյուրերի և

2 Մուսա լեռան հայերը Ֆրանց Վերֆելի վեպին մեջ, Բուխարեստ, 1940, Խրիմյան Հայրիկը որպես դաստիարակ, Բուխարեստ, 1943: Խոսք հայրենիքի մասին, Բուխարեստ, 1945: Մեր պատարագը, Բուխարեստ, 1945: Հայրենի արևին տակ, Բուխարեստ, 1954:

3 Գյուլնազարյան Խ., Ոսկի որոնողները, Եր., 1964, էջ 241:

4 ՀԱԱ, Ֆ. 409, ց. 1, գ. 5316, թ.թ. 2-3 շրջ.:

1 Նշանավոր ճեմարանականներ, Պրակ Ա, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2005, էջ 101:

ուխտավորների մասնակցությամբ միաձայն Ամենայն Հայոց 130-րդ Կաթողիկոս ընտրեց Վազգեն Ա-ին: Հոկտեմբերի 2-ին Մայր տաճարում տեղի ունեցավ նորընտիր կաթողիկոս Վազգեն Ա-ի օծումը: Իջման սեղանի առջև իր երդման արարողության ժամանակ առաջին խոստումներից մեկը Հայոց եկեղեցու, Ս. Էջմիածնի դերի պահպանումն ու բարձրացումն էր:

Հիշյալ երդման կենսակոչումը դարձավ նրա հայրապետական ողջ գործունեության ուղենիշը: Վեհափառը հաստատական հետևողականությամբ, ամենօրյա ջանքերով հաղթահարում էր բազմաթիվ արգելապատնեշներ եկեղեցի-պետություն փոխհարաբերությունները ներդաշնակ հուն տեղափոխելու համար: Աստվածամերժ խորհրդային երկրում առաջադրված խնդրի լուծումը դյուրին չէր, մանավանդ, երբ կյանքի բոլոր բնագավառները, այդ թվում՝ եկեղեցին տոտալ վերահսկողության ներքո էին: Ինչպես ճիշտ նկատում է ուսումնասիրողներից Տ. Իգնատիոս Վրդ. Մալխասյանը, «Աշխարհիկ ու հոգևոր իշխանության ներկայացուցիչների մտահորիզոնի լայնությունը, ազգի ու երկրի կենսական շահերի գիտակցությունը, սեփականը հանրայինին ստորադասելու կարողությունը ևս մի շարք այլ գործոններ միանալով կազմում են այն բարդ հանգույցը, որ անվանում ենք պետություն-եկեղեցի փոխհարաբերություններ»<sup>1</sup>: Կաթողիկոս ընտրվելուց կարճ ժամանակ անց՝ 1955 թ. հոկտեմբերի 9-ին, նորած Հայրապետին, Ազգային եկեղեցական խորհրդի անդամ դրսեկ և ներսի եպիսկոպոսների ուղեկցությամբ, ընդունեց Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի նախագահ Ա. Քոչինյանը,<sup>2</sup> որով դրվեց եկեղեցի-պետություն փոխհարաբերությունների նոր շրջափուլի հիմքը:

Նորած Վեհափառ Հայրապետի կաթողիկոսական գահակալության ժամանակաշրջանի սկիզբը խորհրդային հասարակության բարդ ու դժվարին փուլերից էր:

Դեռևս հաղթահարված չէին ստալինյան բռնությունների դրսևորումները, դրանք թաթափելու, դրանցից ձերբազատվելու երկչոտ փորձերը տակավին նոր էին սկսվում: Նման պայմաններում էր, որ կաթողիկոսական գահին բազմեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսը: Նրա գահակալության 39 տարիներից 36-ը խորհրդային ժամանակաշրջանում էր: Այդ ընթացքում փոխվել են Հայաստանի կոմունիստական կուսակցության կենտկոմի վեց քարտուղարներ (Ս. Թովմասյան, Յա. Զարուբյան, Ա. Քոչինյան, Կ. Դեմիրճյան, Ս. Հարությունյան, Վլ. Մովսիսյան) և գրեթե նույնքան՝ ԽՄԿԿ կենտկոմի քարտուղարներ (Ն. Խրուշչև, Լ. Բրեժնև, Յու. Անդրոպով, Կ. Չեռնենկո, Մ. Գորբաչով, Բ. Ելցին): Բարեբախտաբար, Հայոց հովվապետն իր առիթնող մարդկային ու հոգևոր անզուգական հատկանիշներով, գաղտնատես խորաթափանցությամբ ու անձնադատ համարձակությամբ կարողանում էր շահել պետության քաղաքական ղեկավարության համակրանքն ու վստահությունը: Իր լայնախոհ շրջահայացությամբ և հմուտ ու ճկուն դիվանագիտությամբ Վազգեն Ա.-ն կարողացավ կարգավորել պետություն-եկեղեցի փոխհարաբերությունները՝ երբեմն նաև զգուշավորությամբ դուրս գալով թույլատրելիության սահմաններից:

Նախ պետական և կուսակցական վերը հիշատակված բոլոր գործիչների կողմից Վազգեն Ա.-ն անվերապահորեն վայելում էր բարձր հեղինակություն և երկրորդ, որն ավելի կարևոր էր, իմաստուն խելամուռությամբ նա իր անձի շուրջ ստեղծված խոր հարգանքն ու անվիճելի հեղինակությունը կարողացավ ծառայեցնել ի շահ հայրենիքի, եկեղեցու և ժողովրդի միասնության: Նրան մեծ ջանքերի շնորհիվ հաջողվեց պետական-քաղաքական այրերի բարեհաճությունը ուղղորդել դեպի Խորհրդային Հայաստանի և սփյուռքի գիտամշակութային, հոգևոր կապերի ամրապնդմանը, հայրենիքի շենացմանը և եկեղեցու դերի բարձրացմանը: Նա այդ խնդիրների լուծմանը ձեռնամուխ եղավ առանց ժամանակ կորցնելու՝ գահակալման հենց սկզբից:

1 Տ. Իգնատիոս Վրդ. Մալխասյան, Եկեղեցի-պետություն փոխհարաբերությունները, Գևորգ Զ. Հայրապետի օրոք, «Էջմիածին» ամսագիր, Ս. Էջմիածին, Գ., 2013, էջ 50:

2 ՀԱԱ, Ֆ. 709, ց. 3, գ. 36, թ. 7:

Այս առումով հատկանշական է Վազգեն Ա-ի 1956 թ. մայիսի 12-ի նամակները ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի նախագահ Ն. Ա. Բուլգանինին: «Բոլոր նախագծերի բարեհաջող իրականացման համար» վերնագրված նամակում կաթողիկոսը գրում էր.

«Իմ՝ Հայոց եկեղեցու առաջնորդիս, վերոնշյալ նախագծերի բարեհաջող իրականացման համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելու նպատակով Ձեր բարձր ուշադրությանը ներկայացնում եմք հետևյալ խնդիրները.

1. (2.) Հնարավորություն և անհրաժեշտ պայմաններ ստեղծել Խորհրդային Հայաստանի ու արտասահմանյան հայերի միջև գրականության, արվեստի, գիտության ասպարեզներում երկուստեք կապերի ուժեղացման համար՝ կազմակերպելով այդ ոլորտների պատգամավորների ուղևորություններ և փոխադարձ այցելություններ:

2. (3.) Արտասահմանի հայությունը Հայաստանում տավող գրականությունից օգտվելու հնարավորություն չունի... Խնդրում ենք Ձեր միջամտությունը՝ Խորհրդային Հայաստանին հատկացվող տպագրական թղթի տարեկան ֆոնդերը ավելացնելու համար, այն հաշվով, որ տպագրվող գրականության մի մասն ուղարկվի արտասահման՝ Նամակի բովանդակության հիշյալ կետերից պարզորոշ երևում է, որ Վազգեն Ա-ի համար եկեղեցու դերի բարձրացմանը հավասարազոր կարևորություն ունեին նաև գրականության, արվեստի, գիտության խթանումը և բոլոր հնարավոր եղանակներով սփյուռքի հետ մշակութային կապերի ամրապնդումը:

Վեհափառն իր նամակների մեջ անմիջականորեն եկեղեցուն և եկեղեցաշինությանը առնչվող հարցերից զատ համարձակորեն առաջ էր քաշում հայ ժողովրդի կենսական շահերն արձարձող, այդ թվում՝ Ղարաբաղը, Նախիջևանը, Զավախքը Խորհրդային Հայաստանին վերադարձնելու խնդիրները<sup>2</sup>:

Նախամեծար Հայրապետի մարդկային զուսպ, առաքինի, բարեպաշտ ու լրջախոհ կեցվածքը վստահություն ու խոր հավատ

էր ներշնչում շրջապատին: Հաղորդակից ու մարդասեր բնավորության շնորհիվ Վազգեն Ա.-ն կարճ ժամանակամիջոցում ոչ միայն ընկալվեց ու սիրվեց շրջապատի կողմից, այլև սերտ կապեր հաստատեց հայ մտավորականության՝ գիտնականների, մշակույթի, արվեստի գործիչների հետ թե՛ մայր հայրենիքում և թե՛ ի սփյուռու աշխարհի: Իմաստալից օգտաշահությամբ էին հագեցած վեճամաշուք Հայրապետի բոլոր հանդիպումներն ու գրույցները Վիկտոր Համբարձումյանի, Ֆադեյ Սարգսյանի, Սիլվա Կապուտիկյանի, Սու Սարգսյանի և այլոց հետ:

Նա սփյուռք կատարած հովվապետական 25-ից ավել այցերի ընթացքում առիթը բաց չէր թողնում իր հոտի սոցիալական բոլոր խավերի հետ շփման եզրերը ընդլայնելու, նրանց հայրենիքի սիրով և միասնության գաղափարով ոգեշնչելու համար: Նրա այդ շփումների արդյունքում բազմաթիվ հնամյա արժեքավոր ձեռագրեր, գրքեր, կտավներ, վավերագրեր փրկվեցին անդառնալի կորստյան վտանգից և Վեհափառի ձեռամբ հայրենադարձվեցին մայր Հայրենիք:

Վեհափառի կողմից բացառիկ սևեռումի արժանացավ Էջմիածնի հոգևոր ճեմարանը, որ 39 տարի շարունակ դասավանդեց խորագնա մտավորականն ու մեծ դաստիարակը: 1964 թ. հունիսի 8-ին Վեհափառը վերստին անդրադարձավ Գևորգյան ճեմարանի վերակազմավորմանն ու բարեկարգելուն՝ խնդիր դնելով պատրաստել արտասահմանի հայ եկեղեցական և կրթամշակութային հաստատություններին ծառայող հոգևորականներ ու մտավորականներ<sup>3</sup>:

Լինելով բազմավաստակ ու հմուտ մանկավարժ, հենվելով սեփական հարուստ փորձին՝ նա գիտական հիմքերի վրա դրեց կրթության անտրոհելի բաղադրատարրերից մեկի՝ դաստիարակության խնդիրը: Այստեղ առավել ամբողջական ու համապարփակ դարձավ հոգևոր առաջնորդի և գիտնականի միաձույլ կերպարը: Ճեմարանում նա դասավանդել է փիլիսոփայություն, տրամաբանություն, հոգեբանություն, քարոզչություն դասընթացները: Մասնավորապես փիլի-

1 ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 5787, է. 1-8:

2 ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 5787, թ. 1-8:

3 ՀԱԱ, ֆ. 823, ց. 1, գ. 255, թ. 1-2:

սովայության դասավանդման ընթացքում Վեհափառը դուրս բերեց իմաստասիրությունը զուտ մատերիալիստական մտածողության շրջանակներից՝ այն լուսաբանելով ավելի շատ դիալեկտիկական մոտեցմամբ, նյութականի և հոգևորի համահարաբերակցությամբ, դրանց ներդաշնակ համադրությամբ: Նա հմտորեն գտնում և մատուցում էր դրանց միանությունը՝ համոզիչ կերպով հասցնելով ունկնդրի գիտակցությանը: Վեհափառի ոգեշունչ խոսքը աչքի էր զարնում անհերքելի վերլուծականությամբ, ստույգ փաստարկվածությամբ: Գիտամանկավարժական և ստեղծագործական տարիների ընթացքում նրա բեղուն գրչի զորությամբ ստեղծվել են մոտ երկու հարյուր տարբեր բնույթի գիտական աշխատություններ և հարյուրավոր հայրապետական կոնդակներ:

Վազգեն Ա-ն նաև գիտության հնուտ կազմակերպիչ էր: Նրա ջանքերով ամուր հիմքերի վրա խարսխվեց գիտական լայն համագործակցությունը Հայաստանի գիտությունների ակադեմիայի, Երևանի պետական համալսարանի, պետական կոնսերվատորիայի և այլ գիտական ու ուսումնական հաստատությունների միջև: Հիշյալ հաստատությունների բազմաթիվ գիտնականներ ու դասախոսներ ընդգրկված էին Ս. Էջմիածնի Գևորգյան ճեմարանի ուսումնական ծրագրերի իրականացման գործընթացի մեջ: Լինելով ճշմարիտ մտավորական և գիտնական՝ Վեհափառը հայրական հոգածություն էր ցուցաբերում ՀՀ ԳԱԱ-ի նկատմամբ: Այս առումով հատկանշական է նրա 1961 թ. Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահին գրած նամակը, ուր մասնավորապես ասվում էր. «Ինչպես հայտնի է հարգո Խորհրդիդ, սույն հոկտեմբերի 15-ին պետք է տեղի ունենա Մայր Աթոռի տպարանի պաշտոնական բացումը: Տպարանը գրեթե ամբողջովին պատրաստ է և մոտ ապագայում կարելի է այն շահագործման հանձնել: .... Մենք ջերմապես կփափագենք, որ տպարանը շահագործվեր Հայաստանի գիտությունների ակադեմիայի կողմից, Մայր Աթոռի հետ համատեղ և համախորհուրդ: Ակադեմիայի

հրատարակությունները, որոնք գերազանցապես գիտական բնույթ ունեն, մանավաղ պատմական ու հայագիտական բովանդակությամբ, հետևաբար, միանգամայն պիտի համապատասխանեն մեր տպարանի բնույթին ու խնդիրներին, քան թե այդ տպարանը շահագործվեր Պոլիգրաֆ վարչության կողմից: Հարկ է նկատի ունենալ նաև, որ տպարանը Ակադեմիայի կողմից շահագործվելու պարագան շատ ավելի պիտի խոսեր և միանգամայն համապատասխաներ նվիրատուների իղծերուն, քան եթե այլ վիճակ ստեղծվեր: Սա շատ կարևոր հանգամանք է»<sup>1</sup>: Հեռատես ու ճշգրտորեն կշռադատված այս քայլը գիտության խթանմանն ուղղված կաթողիկոսի հոգածության արտահայտությունն էր, որը հետագայում ունեցավ նորանոր դրսևորումներ: 1991 թ. Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիան, բարձր գնահատելով Վեհափառի գիտական վաստակը, միաձայն նրան ընտրեց ակադեմիայի պատվավոր անդամ<sup>2</sup>:

Հայոց 130-րդ հովվապետը, շարունակելով իր նախորդ երջանահիշատակ Հայրապետի՝ Գևորգ Զ կաթողիկոսի կիսատ թողած գործերը և հետևելով նրա բարեխնամ ավանդույթներին, իր գահակալության տարիներին նոր շունչ հաղորդեց «Էջմիածին» հանդեսի հրատարակմանն ու տարածմանը: Դեռևս 1944 թ. հունվարից կաթողիկոս Գևորգ Զ Չորեքչյանի տևական պայքարի շնորհիվ պաշտոնապես թույլատրվեց հրատարակել «Էջմիածին» ամսագիրը: Վերջինիս թեմատիկայի ընդլայնումը, արձանագրած հաջողությունները, ձեռք բերած բարձր վարկանիշը Ս. Էջմիածնի եկեղեցական կյանքը վերահսկող մարմինների կողմից հաճախ համարժեք վերաբերմունքի չէին արժանանում: Արհեստական, չիմնավորված պատճառաբանությունների, ինչպես նաև ֆինանսական միջոցների սուղ լինելու հետևանքով ամսագիրը անգամ հայտնվում էր փակման վտանգի առջև:

1 Ս. Սուքիասյան, Պատիվ արեք հայոց Վեհափառներին, Եր., «Նաիրի», 2009, էջ 247-249:

2 Նշանավոր ճեմարանականներ, Պրակ Ա, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2005, էջ 107:

Ամենայն Հայոց Վազգեն Ա Հայրապետի անխոնջ ջանքերով փոխվեց մթնոլորտը «Էջմիածին» հանդեսի շուրջ: Արտերկրում Հայ առաքելական եկեղեցու գործունեությունը, որը խրախուսվում էր պետության կողմից, նպաստավոր պայմաններ ստեղծեց նաև «Էջմիածին» ամսագրի պարբերական լույս ընծայման համար: Այն վերածվեց համահայկական, համազգային երկույթի, դարձավ ինքնատիպ օղակ, կամուրջ եկեղեցու, պետության, սփյուռքի և հայրենիքի միջև: Այն սկսեց ավելի շատ գիտական բնույթ կրել, մասնավորապես հայագիտության առումով, միաժամանակ դարձավ հանրամատչելի:

Վազգեն Ա կաթողիկոսի երկարատև գահակալության շրջանում բոլորովին նոր աստիճանի հասցվեց կոնդակագրության մշակույթը: Դրանում կատարվող փոփոխություններում նկատելի են դառնում գիտական

մոտեցումները: Վեհափառը յուրաքանչյուր կոնդակում արժևորում է երևույթը, հստակորեն գնահատում դրանք, փաստարկում դրա կենսակոչման անհրաժեշտությունը՝ նրբորեն անցկացնելով ցանկալի մոտեցումը: Հարուստ զգացական և գիտական տրամաբանված միտքը շաղախված էին Վազգեն Ա-ի կոնդակներում, որտեղ ցայտուն երևում են մարդն ու գիտնականը:

Երջանկահիշատակ Հայրապետի կյանքի ու գիտամշակութային գործունեության մեջ իմաստուն խորաթափանցությամբ ծովածավալ գիտելիքները գործադրելու կարողությունը, նուրբ և ճշգրիտ դիվանագիտությունը, անկտորում ու համոզիչ լավատեսությունը նրա լուսեղեն կերպարը դարձրել են ներշնչանքի հորդառատ աղբյուր և ընդօրինակելի խորհրդանիշ:

eduard.zohrabyan@ysu.am

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀԱԱ, Ֆ. 409, ց.1, գ. 5316, թ.թ. 2-3 շրջ.:
2. ՀԱԱ, Ֆ. 409, ց.1, գ. 5787, է. 1-8:
3. ՀԱԱ, Ֆ.709, ց. 3, գ. 36, թ.7:
4. ՀԱԱ, Ֆ. 823, ց.1, գ. 255, թ.1-2:
5. Գյուլնազարյան Խ., Ոսկի որոնողները, Եր., 1964:
6. Նշանավոր ճեմարանականներ, Պրակ Ա, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2005:
7. Տ. Իգնատիոս Վրդ. Մալխասյան, Եկեղեցի-պետություն փոխհարաբերությունները Գևորգ Զ. Հայրապետի օրոք, «Էջմիածին» ամսագիր, Ս. Էջմիածին, Գ., 2013:
8. Ս. Սուքիասյան, Պատիվ արեք հայոց Վեհափառներին, Եր., «Նաիրի», 2009:

## THE PUBLIC AND SCIENTIFIC CULTURAL ACTIVITIES OF THE CATHOLICOS OF ALL ARMENIANS VAZGEN A

ED. ZOHRABYAN

The circles of public and scientific cultural activity of the 130-th catholicos of the Armenians Vazgen A have a need of serious scientific investigations. It is necessary to observe these circles on the basis of real public political reality of life.

On this point of view his activity can be divided into two historical stages, which are the world leading eparchialien and the catholic.

The intellectual pedagogical and organizational talents of Levon Palchian were exposed on the first stage. University education, the great pedagogical experience, developed taste and active participation in the public life brought him enough recognition and authority in Armenian diaspora of Romania.

On the 29–th of september in 1955 the national church meeting of st. Echmiadzin voted Vazgen A. to be the Catholicos of all Armenians.

He was able to direct the officials' favour of the strengthening of scientific cultural spiritual relations between Soviet Armenia and diaspora and to raise the role of church.

Vazgen A. was a skillfull organizer of science. Wide scientific colloboration between public scientific centers and Gevorgian seminary of Echmiadzin was established by his efforts, the atmosphere round the magazine "Echmiadzin" had changed and enciclical culture raised to new level.

## **ОБЩЕСТВЕННАЯ И НАУЧНО–КУЛЬТУРНАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ КАТОЛИКОСА ВСЕХ АРМЯН ВАЗГЕНА А**

*ЭД. ЗОГРАБЯН*

Общественная и научно–культурная деятельности 130–ого католикоса Всех Армян Вазгена А, которые нуждаются в серезном научном исследовании, необходимо рассматривать на основе реальной, общественно–политической действительности жизни.

С этой точки зрения его деятельность можно разделить на два исторических этапа: мировой, епархиально–руководительский и католический.

На первом этапе выявились интеллектуальные, педагогические, организаторские способности Левона Карапета Пальчяна. Университетское образование и большой педагогический опыт, публикационная способность и развитый вкус, активное участие в общественной жизни принесли ему достаточное признание и авторитет в армянской диаспоре Румынии.

29 сентября 1955г. национальное церковное собрание святого Эчмиадзина избрало Вазгена А. Католикосом Всех Армян.

Ему большим трудом удалось направить благосклонность политических чиновников на укрепление научно–культурных духовных связей между Советской Арменией и диаспорой, на благоустройство родины и на повышение роли церкви.

Вазген А. был искусным организатором науки. Его усилиями развернулось широкое научное сотрудничество между общественно–научными центрами и Эчмиадзинской духовной семинарии Геворкян, изменилась атмосфера вокруг журнала "Эчмиадзин", поднялась на новую ступень энцикликальная культура.